Ուրբաթ, 29 հոկտեմբերի 2010 թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 16 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2010»-ի նվիրատվությունների հավաքագրում», «Լոռու մարզի Արծնի գյուղի համայնքային կենտրոնի և միջնակարգ դպրոցի արտաքին ջրացանցի կառուցում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի կենտրոնական գրադարանի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող գյուղի միջնակարգ դպրոցի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցի մասնաշենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վանաձորի Հայորդաց տան մուտքերի և պատուհանների շվաքարանի կառուցում», «Մետաղական ճաղարանի ձևափոխման աշխատանքներ», «Էջմիածնի Հայորդաց տան սաների ուսումնակրթական պայմանների բարելավում» և «Ճաշարանների սարքավորումների տեղադրման աշխատանքներ» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊԱԿ-ի կողմից իրականացվող ծրագիրը, որի նպատակն է ժամկետանց թունաքիմիկատների հաշվառում, մոնիթորինգ և դրանց էկոլոգիապես անվտանգ հեռացման կազմակերպում.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող ծրագիրը, որի նպատակն է «Արևիկ» ազգային պարկում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղված ազգային պարկի պահպանության բարելավմանը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի պահեստի

վերանորոգում և կահավորում» և «Արարատի մարզի Դիմիտրով գյուղի մանկապարտեզի դռների և պատուհանների փոխում» ծրագրերը.

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կողմից իրականացվող «Տաթևի վերածնունդ» ծրագիրը, որի նպատակն է Տաթևի նանական համալիրի վերականգնումը և հարակից բնակավայրերի զարգացումը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: